



Սայաթ Նովա

Դարդ մի անի, ջան ու ջիգար

Էսպես դիվանի, լավ տեղ ասած, որը գրոց հայերեն տառ, որը վրաց. թուրքերեն էլ ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի:

Դարդ մի՛ անի, ջան ու ջիգար, միտքդ դիաց չտեսնէ.
Աչք խաւարի, անգաճ խուլանայ՝ Էրեսդդ թաց չտեսնէ:

Վո՛ւնց արեգակը շուղքը տա, վո՛ւնց լուսինը լուս անէ.
Աւալ քո տեսնողը մեռնի՝ քիզ գըլխաբաց չտեսնէ:
Դուն գըլուխըդ մահի կու տաս, յիս էլ քիզ հիդ կու մեռնիմ.
Միր Էդնէն թամամ աշխարհըս սով քաշէ, հաց չտեսնէ:

Թէ վոր չգամ ու չտեսնիմ, հագար բաբաթ բան կ'ոսիս.
Քաշկա մարդ վո՛ւնց գայ, վո՛ւնց խօսի, վո՛ւնց քի տըխրած չտեսնէ:

Աստուծո բերնէնէն առնիս մըխիթարիչ սուրբ հոգին.
Էլ վաղ մեռնի Սայաթ Նովէն՝ ճիտըդ գըցած չտեսնէ: